

## ՆԿԱՐԱԳԻՐ

### առաջարկվող ապրանքի ամբողջական

ԲԵԼՄԵՏ ՍՊԸ-ն ԵԹ-ԷԱՃԱՊՁԲ-24/143 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում  
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
2	Բելմետ ՍՊԸ	<p>«Երևան» ձուլվածքով նստարան: Նաստարանի ոտքերը թուջե ձուլվածքից (C4-10 մակնիշի), կողքերին 3մմ բարձրություն ունեցող տառերով գրված <a href="http://www.yerevan.am">www.yerevan.am</a> կայքի անվանումը միաձույլ: Ոտքերի ներքնամասում ունենա գետնին ամրացնելու հնարավորություն (անցք Փ7մմ): Նստարանի ոտքերը հղկված, նախաներկով պատված, ներկված յուղաներկով (գույնը սև) իսկ <a href="http://www.yerevan.am">www.yerevan.am</a>-ը՝ ոսկեգույն: Նստարանի մեջքի մասը թուջե ձուլվածքից (C4-10 մակնիշի), հաստությունը 9 մմ: Պատկերը հայկական զարդանախշ: Պատկերը ներկայացված պատվիրատուի կողմից կամ համաձայնեցված պատվիրատուի հետ: Պատկերի վերևի մասում ձուլված «Երևան» տառերի բարձրությունը 5մմ: Մեջտեղի մասում կլոր շրջանակի մեջ (շրջանակի տրամագիծը 190մմ) ձուլվածքով պատկերված է Երևան քաղաքի դրոշը և գինանշանը: Ձուլվածքը հղկված, նախաներկով պատված, ներկված յուղաներկով սև գույն: Երևանի գինանշանը ներկված յուղաներկով ոսկեգույն: Փայտ հաճարե խոնավությունը (մինչև 7): Բաղկացած է մեջքի հենարանից և նստելատեղից: Մեջքի հենարան՝ երկարությունը 1800 մմ, հաստությունը 40 մմ: Մեջքի հենարանի փայտյա վերևի կիսակլոր և ներքևի ուղիղ մասերը ամբողջ երկայնքով համապատասխանաբար մեկ կտորից պատրաստված, մեջքը թուջե ձուլվածքի հենարանը տեղադրելու բացվածքով: Բացվածքի երկարությունը 1110 մմ: Վերևի</p>

մասը կիսակլոր 52 սմ երկարությամբ: Նստելամասը բաղկացած է հինգ փայտյա ձողերից՝ չափերը 1800x60x40մմ: Նստարանի ամբողջ փայտյա մասերը երանգավորված դեղին-ծիրանագույն և/կամ շագանակագույն /համաձայնեցնել պատվիրատուի հետ/, լաքապատված տախտակամածային լաքով: Նստարանը հավաքված վիճակում պետք է ունենա ամրացման գոտի, որը ձգվում է ոտքերից դեպի նստելատեղի տակ: Աջ և ձախ կողմում 0.5 “ խողովակից 50 սմ երկարությամբ ամրաններ, որոնք ապահովում են ոտքերի գուլգահեռակցությունը: Մեջքից դեպի նստելատեղի տակի մասն միացված են 2 հատ հարթ մետաղյա ամրաններ (25x3մմ), որը ամրացված է նստելատեղի բոլոր 5 փայտյա ձողերին, որոնք ապահովում են դիմացկունակությունը: Նստարանները մատակարարվում են հավաքված վիճակում, փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթով: Արտադրողը պարտավոր է կատարել սպասարկում 1 տարի ժամանակով (գարնանը, ամռանը, աշնանը՝ 3 անգամ): Թարմացնել գույները, անհրաժեշտության դեպքում ամբողջությամբ ներկել: Փայտյա մասերը բնակլիմայական պայմանների ազդեցությունից առաջացած թերությունների դեպքում վերականգնել լաքապատված մակերեսը: Տեղափոխումն և տեղադրումը կատարվում է մատակարարի միջոցների հաշվին: Ըստ պատվիրատուի ներկայացրած հասցեների (Երևան քաղաքի տարածքում): Պատվիրատուի պահանջով (քաղաքային միջոցառումների, համերգների ժամանակ) կատարողը պարտավոր է իր միջոցների հաշվին ժամանակավորապես ապամոնտաժել տվյալ տարածքի նստարանները, տեղափոխել իր մոտ և ավարտից հետո նորից տեղադրել նույն տեղում: Տեղադրումն իրականացնել վարչական շրջանի համապատասխան ստորաբաժանման որևէ աշխատակցի ներկայությամբ, տեղադրումն իրականացնելուց հետո պատվիրատուին ներկայացնել տեղադրված գույքի լուսանկարը՝ թղթային կամ էլեկտրոնային տարբերակով (պայմանագիրը կնքելուց հետո վարչական շրջանի համապատասխան ստորաբաժանումը մատակարարին կտրամադրի էլեկտրոնային հասցե): Նստարանի որևէ անտեսանելի մասում պետք է լինի դաճված «Կենտրոն 2024» բառերը: Նստարանների տեղադրման հնարավոր հասցեներն են՝ Բաղրամյան, Մաշտոցի, Տիգրան Մեծի, Միասնիկյան, Արշակունյաց, Իսակովի, Սայաթ-Նովա պողոտա, Կորյուն, Սարյան, Ամիրյան, Խանջյան Աբովյան, Նալբանդյան, Մոսկովյան, Հերացու, Խորենացու, Պռոշյան, Ագաթանգեղոս, Չարենց, Նալբանդյան, Պարոնյան, Աթենք, Գրիգոր Լուսավորիչ, Վարդանանց, Իսրայելյան, Ջորափի, Արամի, Բուզանդի, Պուշկինի, Կողբացու, Քաջագնուհու, Տերյան, Մկրտչյան, Խորենացու, Հանրապետության, Մելիք

		<p>Աղամյան, Չաքյան, Լեո, Բեյրութի, Իտալիայի, Քոչարի, Դեմիրճյան, Արգիշտի, Սարգսյան, Հանրապետության Հրապարակ փողոցներ, Միսակ Մանուշյանի անվան պուրակ, Ազատության հրապարակ: Յուրաքանչյուր հասցեում տեղադրվող քանակը ճշտել պատվիրատուի հետ:</p>
--	--	---



## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

### предлагаемого товара

ООО БЕЛМЕТ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом БР-БЦДЦПЗР-24/143 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
2		